ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2019 թվականի հունիսի 18-ի նիստի N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի նիստում (արձանագրություն N 10) հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման ընթացակարգում» լրացում կատարելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Ռ.Ա.Հայրապետյանը, Վ.Ա.Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **1.** Գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի նիստում (արձանագրություն N 10) հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման ընթացակարգում» կատարել հետևյալ լրացումը՝ 5-րդ գլուխը 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22-րդ կետով.

«22. Սույն ընթացակարգի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային շարժունակության ծրագրերի պայմաններին համապատասխան՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում մինչև մեկ կիսամյակ տևողությամբ համալսարանի գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատություն-ներում ուսումնառելու մեկնած և վերադարձած ուսանողների վրա:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից և տարածվում է նաև 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի վրա (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2019 թ. հունիսի 18
Երևան